Հայտարարություն Ազգային ժողովում ԶԼՄ ներկայացուցիչների հանդեպ կիրառված բռնությունների վերաբերյալ

2022, 16 սեպտեմբերի, Երևան

2022թ. սեպտեմբերի 15-ին Ազգային ժողովում կրկին կոնֆլիկտ է առաջացել իշխող խմբակցության պատգամավորների և խորհրդարանում հավատարմագրված որոշ լրատվամիջոցների ներկայացուցիչների միջև: Այսպես՝ վեճի են բռնվել «MediaHub.am» լրատվական կայքի թղթակից Անի Գևորգյանն ու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Քրիստինե Պողոսյանը: Մասնավորապես՝ վերջինս հեռախոսով հարվածելու սպառնալիք է դրսևորել, Անի Գևորգյանն էլ ասել է, թե այդ պատգամավորի տեղը փողոցում է: Լարվածություն է առաջացել նաև «Yerevan.Today»-ի թղթակից Սյուզի Բաղդասարյանի՝ ՔՊ-ական պատգամավորների հետ շփվելու ընթացքում:

Ավելի ուշ ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանը իրավապահներին հրահանգել է այս երկու լրագրողներին հեռացնել խորհրդարանի շենքից, ընդ որում՝ Անի Գևորգյանը դուրս է բերվել ուժի կիրառմամբ, քաշքշել են «Yerevan.Today»-ի օպերատոր Գեղազնիկ Հովակիմյանին, դուրս հրավիրել նաև «MediaHub.am»-ի օպերատոր Էրիկ Թովմասյանին: Խորհրդարանի ղեկավարի այս քայլը կամայական է և անթույլատրելի, քանի որ Ազգային ժողովում հավատարմագրված լրագրողի նկատմամբ որևէ սահմանափակում չի կարող կիրառվել բանավոր ցուցումով, առանց քննարկման և համապատասխան որոշում կայացնելու:

Նույն օրը, ավելի վաղ, մայրաքաղաքի Դեմիրճյան փողոցում կազմակերպված բողոքի ակցիան լուսաբանելիս ֆիզիկական բռնության է ենթարկվել «24lurer.am»-ի թղթակից Արթուր Հայրապետյանը: Ոստիկանության ծառայողները լրագրողի ձեռքից խլել են հեռախոսը, նրան ասֆալտին գցել ու հարվածներ են հասցրել, ապա՝ անօգնական թողնելով հեռացել: Ի դեպ, Արթուր Հայրապետյանը նախապես ցույց է տվել լրագրողական բեյջը:

Մենք՝ ներքոստորագրյալ լրագրողական կազմակերպություններս, մեր վրդովմունքն ենք արտահայտում վերոհիշյալ միջադեպերի կապակցությամբ և պահանջում ենք՝

- ԱԺ ղեկավարությունից և «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությունից՝ քննարկման առարկա դարձնել սեպտեմբերի 15-ին խորհրդարանում տեղի ունեցած կոնֆլիկտը, այդ առնչությամբ գումարել էթիկայի հանձնաժողովի նիստ և գնահատական տալ պատգամավորների վարքագծին: Այսօրվա ճգնաժամային, պատերազմական իրավիճակում լրացուցիչ ներքին լարվածություններից խուսափելու համար առավել զսպվածություն և հանդուրժողականություն ցուցաբերել լրատվամիջոցների ներկայացուցիչների հանդեպ: Ապահովել բարենպաստ պայմաններ խորհրդարանում հավատարմագրված բոլոր լրագրողների գործունեության համար:
- ՀՀ ոստիկանությունից՝ անկողմնակալ ծառայողական քննություն իրականացնել, բացահայտել իրենց լիազորությունները չարաշահած, լրագրողին ծեծի ենթարկած ծառայողներին և նրանց պատասխանատվության ենթարկել: Միաժամանակ խստորեն հրահանգել չմիջամտել իրենց մասնագիտական պարտականությունները կատարող ԶԼՄ-ների ներկայացուցիչների աշխատանքին և անվտանգ պայմաններ ստեղծել նրանց գործունեության համար:

ԽՈՍՔԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

ԵՐԵՎԱՆԻ ՄԱՄՈՒԼԻ ԱԿՈՒՄԲ

ՄԵԴԻԱ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ «ԱՍՊԱՐԵԶ» ԱԿՈՒՄԲ

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ԲԱԶՄԱԿՈՂՄԱՆԻ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ-ՀԱՅԱՍՏԱՆ

ՀԱՆՐԱՅԻՆ ԼՐԱԳՐՈՒԹՅԱՆ ԱԿՈՒՄԲ

«ԼՐԱԳՐՈՂՆԵՐ ՀԱՆՈՒՆ ԱՊԱԳԱՅԻ» ՀԿ

«ԼՐԱԳՐՈՂՆԵՐ ՀԱՆՈՒՆ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ» ՀԿ

ԳՈՐԻՍԻ ՄԱՄՈՒԼԻ ԱԿՈՒՄԲ

«ՖԵՄԻԴԱ» ՀԿ